PRESS RELEASE

PR22/368

# ԱՄՀ աշխատակազմը Հայաստանի հետ աշխատակազմի մակարդակով համաձայնություն է ձեռք բերում կանխարգելիչ «Պահուստային ծրագրի» շուրջ

## ԱՆՀԱՊԱՂ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Առաքելության ավարտին կազմվող մամուլի հաղորդագրությունները ներառում են ԱՄՀ աշխատակազմի թիմերի հայտարարությունները, որոնք երկիր կատարած այցից հետո ներկայացնում են նախնական եզրահանգումները: Սույն հայտարարության մեջ արտահայտված են ԱՄՀ աշխատակազմի տեսակետները և պարտադիր չէ, որ ներկայացնեն ԱՄՀ Գործադիր խորհրդի տեսակետները: Առաքելության նախնական եզրահանգումների հիման վրա աշխատակազմը կկազմի զեկույց, որը ղեկավարության կողմից հաստատվելու դեպքում կներկայացվի ԱՄՀ Գործադիր խորհրդին՝ քննարկման և որոշման կայացման համար:

- ՀՀ իշխանությունները և ԱՄՀ աշխատակազմը եռամյա կանխարգելիչ «Պահուստային ծրագրի» շուրջ աշխատակազմի մակարդակով համաձայնություն են ձեռք բերել: Համաձայնությունը ենթակա է հաստատման ԱՄՀ գործադիր խորհրդի կողմից և ակնկալվում է, որ կքննարկվի 2022 թ. դեկտեմբերին.
- Առաջարկվող ծրագիրը կօժանդակի կառավարության տնտեսական ծրագրին՝ ապահովելու ներդրումներով խթանվող, գիտելիքահենք և արտահանմանը միտված տնտեսական աճ՝ միաժամանակ պահպանելով մակրոտնտեսական, հարկաբյուջետային և ֆինանսական կայունությունը և կրճատելով աղքատությունը:

Վաշինգտոն, ԿՇ - **2 նոյեմբերի, 2022 թ.:** Հայաստանի իշխանությունների խնդրանքով՝ Արժույթի միջազգային հիմնադրամի աշխատակազմի թիմը, տկն. Իվա Պետրովայի գլխավորությամբ, սեպտեմբերի 26–ից հոկտեմբերի 6-ի ընթացքում այցելել է Երևան՝ ԱՄՀ կանխարգելիչ «Պահուստային ծրագրի» օժանդակությամբ եռամյա տնտեսական ծրագիրը քննարկելու համար: Քննարկումների, այդ թվում՝ հեռավար հանդիպումների շարքն ավարտելիս՝ տկն. Պետրովան հետևյալ հայտարարությունն է արել.

Ուրախ եմ հայտարարել, որ ԱՄՀ թիմը և Հայաստանի իշխանությունները աշխատակազմի մակարդակով համաձայնություն են ձեռք բերել 128.8 միլիոն ՓՀԻ (շուրջ $165.6 միլիոն) գումարով կանխարգելիչ «Պահուստային ծրագրի» շուրջ՝ օժանդակելու կառավարության տնտեսական ծրագրին՝ պահպանելու մակրոտնտեսական, հարկաբյուջետային և ֆինանսական կայունությունը և առաջ մղելու ներառական աճի խթանման բարեփոխումները: Համաձայնությունը ենթակա է հաստատման ԱՄՀ գործադիր խորհրդի կողմից, որն ակնկալվում է, որ այն կքննարկի 2022 թ. դեկտեմբերին:

«Համաշխարհային և տարածաշրջանային նշանակալի մարտահրավերների պայմաններում առաջնորդվելով առողջ մակրոտնտեսական քաղաքականությամբ՝ Հայաստանը 2022 թ.-ին շուրջ 11 տոկոսանոց տնտեսական աճ ապահովելու ճանապարհին է՝ մասամբ պայմանավորված երկիր արտաքին եկամուտների, կապիտալի և աշխատուժի ներհոսքերով: Հարկաբյուջետային արդյունքների գերակատարումը և դրամի արժևորումը նպաստել են պետական պարտքի զգալի նվազմանը, ինչն այս տարի

700 19th Street NW
Washington, DC 20431
USA

ակնկալվում է, որ կիջնի մինչև ՀՆԱ-ի 51 տոկոսը 2021 թվականին արձանագրված 60.3 տոկոսից: Թեև գնաճը ժամանակավորապես բարձրացել է առաջարկի և պահանջարկի ցնցումների հետևանքով, ՀՀ կենտրոնական բանկը 2020 թ. դեկտեմբերից սկսած վերաֆինանսավորման տոկոսադրույքը նախաձեռնողաբար բարձրացրել է 625 բազիսային կետով՝ նպատակ ունենալով գնաճն ուղղորդել դեպի իր 4 տոկոս միջնաժամկետ թիրախը: Միջազգային պահուստներն ավելացել են, իսկ դրամը նախորդ մի քանի ամսիներին շեշտակի արժևորվել է: Կարևոր կառուցվածքային բարեփոխումներ են տեղի ունեցել հանրային ֆինանսների կառավարման, եկամուտների վարչարարության, գնաճի նպատակադրման ծրագրի, ֆինանսական ոլորտի և կառավարման բնագավառում:

«Ակնկալվում է, որ 2023 թ.-ին տնտեսական աճի տեմպը կդանդաղի՝ արտացոլելով արտաքին ավելի թույլ պահանջարկը և համաշխարհային ֆինանսական ավելի խիստ պայմանները և միջնաժամկետ հեռանկարում կպահպանվի 4-5 տոկոս միջակայքում: ՍԳԻ գնաճը կանխատեսվում է, որ դրամավարկային խիստ քաղաքականության օժանդակությամբ և արտաքին ցնցումների ազդեցության թուլանալուն զուգընթաց աստիճանաբար կմոտենա ՀՀ ԿԲ միջնաժամկետ թիրախին: Ընթացիկ հաշվի պակասուրդը, որն ընդլայնվել է տնտեսության արագ աճի հետ, ակնկալվում է, որ աստիճանաբար կնվազի մինչև ՀՆԱ-ի շուրջ 5 տոկոսը: Հեռանկարի նկատմամբ ռիսկերը հիմնականում արտաքին են:

«Ելնելով խիստ անորոշ հեռանկարից և գերտաքացման ռիսկերից՝ անհրաժեշտ է, 2023 թ.-ի բյուջեում խուսափել պահանջարկի ավելորդ ճնշումներ ստեղծելուց: Բյուջեի փաթեթի շրջանակում առաջնահերթությունն անհրաժեշտ է տալ բարձրորակ ծախսերին և սոցիալական ապահովության ցանցի հզորացմանը: Խիստ անհրաժեշտ կապիտալ ծախսերի ավելացմանն անհրաժեշտ է օժանդակել հանրային ներդրումների կառավարման գործընթացի բարեփոխումների ընդլայնմամբ՝ ռազմավարական, թափանցիկ և հետևողական ծրագրերի ընտրություն և ժամանակին ու արդյունավետ իրականացում ապահովելու համար: Կանոնահենք հարկաբյուջետային շրջանակին շարունակական համապատասխանությամբ պարտք-ՀՆԱ հարաբերակցությունը նվազման ուղու վրա կպահպանվի:

«Ավելի թափանցիկ, արդար և շրջակա միջավայրի համար նպաստավոր հարկման համակարգի և եկամուտների ավելի հզոր վարչարարության որդեգրմանն ուղղված իշխանությունների ջանքերը կօժանդակեն եկամուտների ավելացման կառավարության նպատակներին և տարածք (հնարավորություն) կստեղծեն խիստ անհրաժեշտ զարգացման ծախսերի համար: Ողջունելի են նաև Կառավարության՝ ծախսերի արդյունավետության և արդյունքայնության բարձրացման, հանրային ֆինանսների կառավարումը բարելավելու, այդ թվում՝ հարկաբյուջետային ռիսկերի լավ կառավարման, թափանցիկության և ղեկավարման և ավելի որակյալ հանրային ներդրումների ապահովման ծրագրերը:

«Դրամավարկային քաղաքականության ներկա դիրքը պատշաճ է, և քաղաքականության հետագա փոփոխություններն անհրաժեշտ է, որ պայմանավորվեն գնաճի և գնաճի սպասումների էվոլյուցիայով: Կապիտալի շուկայի զարգացումը խթանելու և ֆինանսական ներառումը խորացնելու ջանքերը կշարունակեն մեծացնել դրամավարկային քաղաքականության փոխանցման մեխանիզմի արդյունավետությունը: Աշխատակազմը ողջունում է ՀՀ ԿԲ շարունակական հանձնառությունը ճկուն փոխարժեքի ռեժիմին, ինչը շատ լավ է ծառայել Հայաստանին հաջորդական արտաքին ցնցումների պայմաններում և պահուստների առողջ բուֆերների պահպանմանը:

«Ռիսկերի շրջահայաց կառավարման և ներգործուն վերահսկողության շնորհիվ բանկային համակարգը լավ կապիտալացված է և իրացվելի: Ֆինանսական ոլորտի ռիսկերի շարունակական մոնիթորինգը և մակրոպրուդենցիալ գործիքների կատարելագործումը կօգնեն նվազեցնել բնակարանների գների և հիփոթեքային վարկավորման արագ աճին առնչվող ռիսկերը: Աշխատակազմը ողջունում է ՀՀ ԿԲ-ի՝ ռիսկերի վրա հիմնված բանկային վերհսկողության ամրապնդման և բանկերի կողմից իրենց ռիսկերի կառավարման կարողության զարգացումը խրախուսելու, ինչպես նաև բանկերի վերակառուցման կատարելագործված համակարգ մշակելու ծրագրերը:

«Կառավարության կառուցվածքային բարեփոխումների օրակարգը պատշաճ կերպով կենտրոնանում է բիզնես միջավայրի բարելավման, արտադրողականության բարձրացման, գործազրկության և աղքատության կրճատման և կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության հրատապ մարտահրավերների դիմագրավման վրա: Նշված նպատակների իրագործման համար պահանջվում է ավելի ամուր առևտրային կապերի ստեղծում, հաղորդակցությունների օժանդակման համար ենթակառուցվածքների կառուցում, տրանսպորտի, հողի և ջրի կառավարման բարելավում և կանաչ էներգիայի արտադրության խթանում, ֆինանսական ծառայությունների հասանելիության և աշխատուժի մասնակցության խրախուսում, կառավարման բարեփոխումների ավարտում և ոչ ֆորմալության կրճատում: Թվայնացման հավակնոտ ջանքերով անհրաժեշտ է առաջնորդել պետական կառավարման բարեփոխումները և բարելավել հանրային ծառայությունների որակն ու մատուցումը:

«ԱՄՀ թիմը շնորհակալություն է հայտնում ՀՀ իշխանություններին, մասնավոր հատվածին և զարգացման գործընկերներին՝ արգասաբեր քննարկումների և համագործակցության համար»: